

Յունաստանն ալ մեծ պատրաստութիւններ կտեսնէ, բայց իւր թագաւորը դէռ յետ չդառնար ճամբորդութենէ:

14 Օգոստոս

Պ. Նորայր հարուստ ազգայինի մը թերթ մը կղրկէ իւր ֆրանսերէնէ հայերէն բառարանէն, գոր մաս առ մաս կհրատարակէ:

–Մա ի՞նչ է, կպոռայ հարուստ ազգայինը. այս բառարանն ի՞նչ ընեմ ես. ժամանակ է հիմայ ատանկ չնչին բաներու համար ստակ տալ. չեմ ուզեր, յետ դարձուցէք եւ ըսէք իրեն, որ մէյ մ'ալ ասանկ բաներ չղրկէ ինձի: Ահա, պարոն գրագիր, քեզի ալ յատկապէս կպատուիրեմ, որ եթէ իմ բացակայութեանս ինձի համար գիրք կամ լրագիր բերելու ըլլան՝ չընդունիք, ապա թէ ոչ կը վռնտեմ զքեզ:

Ժամ մը կ'անցնի, ուրիշ մը կը մտնէ՝ որսի շուն բերելով հետ:

–Ինձի՞ համար բերիք այդ շունը:

–Այո՛, տէ՛ր:

–Ի՞նչպէս է այդ շունն, աղէ՞կ է:

–Շատ աղէկ ցեղէն է, ազնուական տոհմէն է:

–Ի՞նչ կ'ուզէք ադոր համար:

–Չորս ոսկի:

–Երեք ոսկի տամ: Պարոն գրագիր, սա շունն առ եւ տուն տար:

Եւ մեր գրագէտները դէռ չեն ուզեր համոզուիլ, որ մեր հարուստներն ամեն բանի ստակ կու տան բաց ի լրագիրներէ եւ գիրքերէ: Բացառութիւններ կան, բայց այնչափ հազուագիւտ են, որ արուեստահանդէսի մը ղրկելու համար պահած եմ զանոնք:

15 Օգոստոս

Բ. Դուռն նոր պայմանաժամ կը մուրայ Տուլչինիօն Գարատաղի յանձնելու համար:

–Քանի մը օր պայմանաժամ:

–Աստուած ողորմի:

–Ստակ մը չունիմ, քիչ մը պայմանաժամ ողորմեցէ՛ք:

–Բարի եկար: